

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

10.04.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բարոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ն.Ասրյանը, Ս. Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ա.Աղլոյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխոյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Եղիազարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ձեկ.Ն.Սարգսյան/
2. ա) Երկրաշարժի 30-րդ տարելիցի միջոցառումների մասին
բ) Հակահրդեհային կանոնների պահպանման մասին
/Ձեկ.Ա.Նալբանդյան/
- 3.Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին
/Ձեկ.մարզպետի տեղակալներ/
- 4.Շենքերի, շինությունների նախագծման և շինարարության ընթացքում օրենսդրությամբ սահմանված հակահրդեհային նորմատիվային պահանջների կատարման մասին
/Ձեկ.Ա. Ջանազյան/
5. Տեխնոլոգիական կենտրոնում կայացած Հեքետոն մրցույթի մասին
/Ձեկ.Հ.Մկրտչյան/
6. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ձեկ.Հ.Պապոյան/
7. Առաջիկա զորահավաքային միջոցառումների մասին
/Ձեկ.Ս.Ղուբաթյան/
- 8.Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին:
/Ձեկ.Գ.Հակոբյան/
9. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Ըստ համայնքների և վարչական տարածքների անհատական աշխատանքներ տանել և վերահսկողություն սահմանել սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների կատարման ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Դարբինյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ս.Ղուբաթյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և համագործակցել ԱԻ նախարարության և տարբեր կազմակերպությունների ու համայնքների հետ՝ երկրաշարժի 30-րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման և պատշաճ ձևով անցկացման ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Շրջաբերական գրություններ ուղարկել մարզի համայնքներին, առողջապահական և կրթական կազմակերպությունների տնօրեններին՝ համայնքներում և կազմակերպություններում հակահրդեհային նորմատիվային պահանջների կատարման, ինչպես նաև շենք-շինությունների նախագծման և շինարարության օրենսդրական սահմանված պահանջների կատարման և պահպանման ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների և ճանապարհաշինական ու այլ կազմակերպությունների կողմից փոխհամագործակցված աշխատանքների կատարման նկատմամբ՝ ճանապարհային կահավորանքի, նշանների, նշագծումների և հարդարման այլ աշխատանքների իրականացման նպատակով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ԼԱՄԲԱՆԴՅԱՆ